

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) իրավաբանական վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ Մարիամ Գրիգորյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

➤ Ուսումնասիրել եմ Տեսչական մարմնի գործառույթները կանոնակարգող օրենսդրությունը՝ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում քաղաքականության և վերահսկողության տեսանկյունից: Առաջարկություններ եմ ներկայացրել թվով 4 ոլորտային օրենքներում և «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասի» օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

➤ Տեսչական մարմնի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ստեղծված անհրաժեշտությամբ պայմանավորված իրականացրել եմ Տեսչական մարմնի՝ նոր չափանիշներով գնահատված և դասակարգված քաղաքացիական ծառայության անվանացանկի և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման և վերջինիս առնչվող այլ գործառույթներ:

➤ Աջակցել եմ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված՝ հաստիքների և (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատման, ինչպես նաև պաշտոններում վերանշանակման կամ ազատման հետ կապված աշխատանքներին:

➤ Մասնակցել եմ Վարչության կողմից մշակվող ներքին իրավական ակտերի, մասնավորապես՝ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների մշակման աշխատանքներին, ներկայացրել քննարկվող հարցերի առնչությամբ համապատասխան առաջարկություններ: